ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 32-Լ

«10» 03 2025 թ. գ. Երևան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՎՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման հավելված N 6-ի 1-ին կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազությունում տրանսպորտային ծախսերի այլընտրանքային փոխհատուցում ստացող հսկողական գործառույթներ իրականացնող անձանց շրջանակը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Դատախազներին օրենսդրությամբ նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար տրանսպորտային ծախսերի դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» 2022 թվականի մարտի 3-ի կարգադրությունը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների

զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ գլխավոր դատախազի
2025 թվականի մարտի 3-ի
N 32-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ ՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿԸ
1. ՀՀ գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազներ.
2. ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
3. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության դատախազներ.
4. ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
5. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
6. ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
7. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
8. ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազներ.
9. Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազությունների դատախազներ.
10. Մարզային դատախազությունների դատախազներ.
11. ՀՀ զինվորական դատախազության դատախազներ (բացառությամբ ՀՀ ԶԿԴ պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազների):